



# ԱԶԱՏ ԽՕՄՔ

ՀԱՄԱԹ 17 ՕԳՈՍ. 1907. ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ ԹԻ-41

## ԽՈՐՀՐԴԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐԱՊՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

Այն Պատմական Արտասովոր Ատենը որ վերջերս Ընտրողական ժողով աւուրին սակ Աղեքսանդրիոյ Առաջնորդարանին մէջ գումարուելով 550ի մօտ անմեղ Հայեր իրենց քաղաքացիական անբռնարայելի իրաւունքներէն զրկեց և կը պատրաստուէր աննշան փոքրամասնութեան մը ձեռքով իր թէ սահմանադրական ընտրութեան ձեռնարկել, այսօրերս իր զխտուն վրայ ստացաւ մին այն առւելքէն որոնք զարագլուխ կը կազմեն ջրարուժական տարեկրութեանց մէջ:

Այդ առւելք 4. Պոլսոյ 8 Սգոստոս թուակիր խերթերը հետեակ կերպով կը թափեն Ընտրողական ժողովի վրայ.

Եզրիպտոսի առաջնորդը իր կրկին անգեկադրերով կը ծանուցանէր թէ Աղեքսանդրիոյ թեմական ժողովներու կազմակերպութեան համար կատարուած են ընտրական նախապատրաստութիւնները, Կեղրոնէն սահմանեալ վերջին հրահանգին համաձայն և ուղարկելով ընտրողաց և ընտրելեաց ցանկերը, հրահանգ կը խնդրէր ձեռնարկելու համար ընտրութեանցս:

Ո՞րոնք ժողովը նկատելով որ ներկայ ամառնային

եղանակին մէջ, օղափոխութեան պատճառաւ, ընդհան-  
րապէս եզրկատուէն հեռացած կ'ըլլան ազգայիններէն  
շատեր, և ընտրութեան կարևորութեանը տեսակէտով  
անոնց ներկայութիւնը անհրաժեշտ է, վերապահեց  
ընտրութեանց կատարումը աշնանամուտքին»

Այո՛, Տիարք և Տիկնայք, անգամ մըն ալ պիտի  
սպասենք Աշնան որպէսզի կարենանք կատարել ընտ-  
րութիւնները Աշո՛ւն, Աշո՛ւն, ա՛ շուն, և՛րբ պիտի  
գաս ու մեզ փրկես այս տագնապէն: Սպասելով Աշնան,  
առ այժմ կրգենք միաբերան.

«Տամատեանը քաջ, իր ընկերներով  
Կ'ուզէ ընտրութիւն, կը սպասէ Աշնան»

\* \* \*

Ինչ որ մտահոգութիւն կը պատճառէ սահմանա-  
դրական ընտրութեան սիրահարներուն սա պարագան  
է թէ արգեաք կրբեք Աշունը պիտի գա՛յ: Որովհե-  
տեւ այնպիսի երկրի մը մէջ կ'ապրինք ուր եղանակ-  
ները իրարու հետ կը շփոթին և շատ դժուար է ի-  
րարմէ զանազանել: Կ. Պոլսոյ համար եթէ Ձմեռ, Գա-  
րուն, Ամառ, Աշուն որոշ եղանակներ են, որոնք յայտ-  
նի նշաններով կ'ապացուցուին, նոյնը չէ Եզրկատուի  
մէջ:

Ենթադրենք թէ քանի մը ամիսէն Ընտրողական  
Ժողովը, Կ. Պոլսոյ օրացոյցներուն վրայ հիմնուելով,  
պաշտօնապէս տեղեկագրէ Պատրիարքարան թէ Աշու-  
նը հասած է Եզրկատու և ընտրական հրահանգ խնդրէ՝  
Միևնոյն ժամանակ ալ, ուրիշ աղբիւրէ մը, կէս պաշ-  
տօնապէս, իմաց տրուի կեղրոնական վարչութեան թէ՛  
Գարունն է որ կը տիրապետէ Նեղոսի ափերուն վը-  
րայ:

Ի՞նչ պիտի ընէ Ոսոն Ժողովը այդ խառնակ տե-

դեկտեմբեանց հանդէպ Հաւանօրէն պիտի ստիպուի  
Ֆանձնախօս մը զրկել որպէսզի տեղւոյն վրայ քն-  
նութիւն մը կատարելով՝ արգիւնքը իրեն հազորդէ  
Արդ, այդ նորեկ Պոլսեցիները երբ եզիպտոս հասնին,  
ձեռքերնին խզճերնուն վրայ, պիտի կրնան սպանո-  
վապէս բաւ որ տիրող եզանտիր Աշո՞ւնն է թէ Գարու-  
նը։ Անշուշտ ո՛չ։ Կարծիքներու անհամաձայնութիւն մը  
պիտի ծագի, ոմանք պիտի պնդեն թէ Աշնան մէջ են,  
տրիչներ պիտի յամառին բաշու որ Գարուն է, եւ  
վերջապէս պիտի վերադառնան Պոլիս, երկու մասի  
բամնուած, այսինքն՝ Աշնանայինք եւ Գարնանայինք։

Ինչպէս կը տեսնուի Սաան ժողովի այդ Վնա-  
նամուտքը մին է այն քիւլաներէն որոնք Պատրիար-  
քարանը, տարիներէ ի վեր, առեն առեն կ'անցնէ մեր  
զլխին։

\* \* \*

Եւ յետոյ ըսելիք չի կայ, Պատրիարքարանը տը-  
համարհելի քանակութիւն մը կը նկատէ կոր բոլոր  
այն Միհրան իւան Գալֆայեանները, Գլորգ Ասրգի-  
եանները, Տօթի, Ժամկոչեանները, Պերճ Յհանեաննե-  
րը, Յովհաննէս Ենրիքեանները որոնք մեր գաղութի  
ապարօշին ամէնէն թանկագին զարդերն են։ Պատրի-  
արքարանի համար եզիպտոսի ամբողջ հայ հասարա-  
կութիւնը կը ներկայացնեն Վսեմ։ Պօզոս փաշա Նու-  
պար, Վսեմ։ Արրահամ փաշա Բարթող, Վսեմ։ Արթին  
պէյ Բէիզեան եւ Վսեմ։ Միքայէլ պէյ Էէիզեան։

Երբ Վսեմ։ Պօզոս փաշա Երուպա երթայ, ըստ  
Պատրիարքարանի «Եզիպտոսէն հեռացած կ'ըլլան ազ-  
գայիններէն շատեր», իսկ երբ Վսեմ։ Արթին պէյն ալ  
հեռանայ, այն առեն Եզիպտոսի հայութեան գրեթէ  
եւծամասնութիւնը Երուպա գաղած կ'ըլլայ։

Ի զ՝ ր Ընտրողական Ժողովի անդամները կ'ազգալին թէ իրենք ալ մարդ են. Պատրիարքարանք միշտ կը կատարած ընտնել մարդկութեան վրայ, ինչպէս ոճանք Քրիստոսի ատուածութեան:

\* \* \*

Կերևոյ թէ Սան Ժողովի որոշումը ազնուաբար իրարանցում մը առաջ բերեր է Ընտրողական Ժողովի անդամներուն մէջ:

Առաջնորդ Ա. Հայրը որ հազիւ Արևսանդրիոյ օղէն կազմութեան, սկսած էր, ըստ հաւասար տեղակութեանց, կանոնաւորապէս վճարել բնական հարկը. նորէն մասնուեր է անտանելի պնդութեան, վսեմ. Սանք կրօնցուցիւր է իր... պարսկերէնը Տօքթ. Ժամկոչեան ճորէն վիճեցաւ. Սահմանադրութիւնը՝ գոչեր է, Շնորհեան բարկութենէն փորձեր է մազերը փետաել. իսկ Տահասեան առեղծուածային լուծիւն մը պահեր է. միս անդամները՝ իրենց յուզումէն՝ տեղերնին .... նստեր են:

Ոճանք կը խորհին թէ Ընտրողական Ժողովի երկու խորխու սիւներուն՝ Տ. Գէորգ Սարգիսեանի և Տ. Պերճ Օհանեանի բացակայութիւնն է պատճառը Աշնանամուտքի որոշման: Արդեօք Պատրիարքարանք այդ երկու անձնաւորութիւններուն ներկայութիւնը անհրաժեշտ դատած է ընտրական գործողութիւններուն սկսելու համար. այդ պարագային Գ. Սարգիսեան և Պ. Օհանեան չորս եղանակներուն մէջ Աշունը կը ներկայացնեն ըստ Սան Ժողովոյ:

Մեր խորհրդապաշտ նկարիչներուն համար անսգեղեցիկ նիւթ մը.

Տ. Գ. Սարգիսեան և Տ. Պ. Օհանեան արմաւենիք մը տակ նստած, զլուխնին գալնիով զարգարուն և

ձևաբերներն մէջիկ Վարչական Հրահանգ, իրարու հետ  
 վը խօսին: Ա. պատկերին տակն այ խոչոր գիրերով  
 ԵԳՐՊՏԱԿԱՆ ԱՇՈՒՆ

Ետյնը կարելի է նաև մարմարեայ արձանով աչ  
 ներկայացնել և արձանը կանգնել Առաջնորդարանի  
 քակը:

\* \* \*

Իսկ ի՞նչ պիտի ըլլայ կախումներուն վիճակը,  
 ամիսներով երբեք և տատանեալ պիտի մնա՞ն Եկե-  
 ջղիքին պատն ի վարչ Հասկցաք անշուշտ որ խօսքս  
 356 ընտրողներու համար է, որոնք «Աշխատեալութիւն»  
 քուէ պիտի տան:


Այդ ցանկը այնքա՞ն հապճեալով ու այնքա՞ն թերի  
 կերպով պատրաստուած, շաւաղոյն չէ՞ որ վար աւեր-  
 օի և եկեղեցեոյ գանձարանին մէջ պահուի, չար նա-  
 զար է ազատ մնալու համար: Բաց աստի մինչև այդ  
 խիստ թէական և գուցէ անհասանելի Աշունը հարկ  
 ըլլայ փոփոխութիւններ ընել ցանկին մէջ: Ամուսնա-  
 ցեալ մը կրնայ իր կինը կորսնցնել ու զրկուիլ ընտ-  
 րողի իրաւունքէն, ուրիշ մը մնանկանալ և զոցել ա-  
 ռեւտրական տունը որ իրեն իրաւունք կուտար քուէ  
 տալու, ես կրնամ ամուսնանալ և ընտրող քաղաքացիի  
 աստիճանին բարձրանալ կամ ֆոլ ծախելու համուի  
 մը բանալով աւետրական տուն մը հիմնել: Ուրիշ մը  
 կարող է երեսը սև ներկել և իբրև բնիկ տեղացի քուէ  
 տալու իրաւունք պահանջել: Վերջապէս ասիէ մինչև  
 Աշուն, - և ինչ Աշուն, Պատրիարքական և Պատն Ժո-  
 ղովոյ Աշուն, - տակաւին շատ ջուր կրնայ վազել նե-  
 ղոսին մէջէն ու մեր տունին ձեղունէն:

Այդ ցանկը արդէն «Մահմանադրական անկատար»  
 կրնայ ստորագասական անկատարի փոխուիլ: - անանկ

չէ՞, եւ Գէորգի ճի պատուելի . . . . . եւ սյրուրենա-  
կան անկատար :

\* \*

Իրաց այս անտարց վիճակին մէջ, Աշնանամուտ-  
քի տերևանմափնիրու քմահաճոյքին մասնուած՝ փր-  
կու թեան ուրիշ ճամբաց չի կայ կարծեմ մեզի համար,  
այլ խմբովն դիմել Լահէյի իրաւախոհական Ատեանին  
որպէսզի միանգամ ընդմիշտ վերջ մը դնէ Ալեք-  
սանդրիոյ ազգային գործերու խառնաչիւթ վիճակին :  
Առ այժմ սպասենք Աշնան :



ՃՆՄԱՐՏԱՆՄԱՆ ԼՈՒՐԵՐ



Կը լսենք թէ Ընտրողական Փողովի անդամ-  
ները խմբովն սրտչեր են հրամարիլ . . . Աշնանա-  
մուտքին սպասելէ :



Չէզոք ազգային մը մեզի դիմելով կը հար-  
ցընէ թէ արդեօք կարելի չէ՞ տեղական ազգա-  
յին հարցը լուծել թէքմէչիֆթի կամ Էազը  
մը թուրայի դրութեամբ :



Կըսուի թէ իրաց վիճակին շարունակմանը  
նախանձախնդիր ազգայիններ Կոռնոսի դիմելով  
կաշառեր են զայն որպէսզի եգիպտոսի համար  
այս տարի Աշունը գուրս ձգէ եղանակներու  
չարքէն :



Առաջնորդ Ս. Հայրը սրտած է մինչև Ա-  
չուն մեղսանդրիոյ Հայերուն ամուսնութեան  
արածութիւն չի տալ, ընտրելիներու նոր ցան-  
կին պատշաասութիւնը չգժուարացնելու հա-  
մար:

Յառաջիկայ կիրակի Տ. Մ. Տաճարեան քա-  
նախօսութիւն մը պիտի ընէ Տիգրան Երկաթի  
սահլը, նիւթ ունենալով «Տարուան շորս եղա-  
նակները և իրենց գալստեան ժամանակը» Երեք  
տարիէ ի վեր ամուսնացողները, պետական պաշ-  
տօնեաները և առևտրական առև ունեցողները  
միայն նեկայ պիտի գտնուին սոյն բանախօ-  
սութեան:

ԽԱՆԱՍՕՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԻՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Անցեալ կիրակի, կէսօրէն ետքը, երկսեռ  
չառ հոծ բազմութիւն մը լեցուցած էր Տիգրան  
Երկաթ Միութեան սրահը տօնելու համար տաս-  
նամեայ տարեգարծը Խանասօրի արշաւանքին ո-  
րը Հայկական կեանքին վերջին վերազարթնու-  
մին ամէնէն փառայեղ և ամէնէն արդիւնաւոր  
գործքը կը ներկայացնէ:

Հանդէսը ուրախութեան հանդէս մըն էր,  
ինչպէս որ պէտք էր ըլլալ, կատարուելիքը ըլ-  
լալով հայկական յեղափոխութեան կողմէ Բիւր-

տերու վայրագ ցեղի սը դէմ տարուած կարեւոր մէկ յաղթութեան փառ սրանանքը:

Հանգէսը բացուեցաւ «Լարկուտ Տեպաց» երգով որուն յաջորդեցին սրտատանութիւններ Օրք. Կիւրեղեանի և Յարէթեանի կողմէ, երկուքն ալ իրենց զգայնութիւնովը և վառվառնութիւնովը կատարեալ, Հանգէսին մէջ մասնաւոր փոյլ մը կը կողմէին Օր. Աղաւնի Էթէքճեանի հրաշալի ձայնով մեներգները, «Օրօր» և «Ո՛հ ի՛նչ անուշ», դաշնակի ընկերակցութեամբ, և նուազի այն երկու կտորները զորս զարկին Պ. Պ. Ն. փառեան և Ա. Ալպան, միասին, առաջինը դաշնակով և երկրորդը ջութակով, անասելի յաջողութեամբ մը:

Հանգէսը կ'ամբողջանար երկու զօրեղ բանախօսութիւններով զորս ըրին եգիպտոսի համար ծանօթ բեմասացներ Պ. Պ. Ն. Հանգոյց և Շահէն (Բարսեղ Շահպաղ):

Պ. Հանգոյց խօսեցաւ օրուան տօնին վրայ ու վեր առաւ Խանասօրի արշաւանքին մեծ նըշանակութիւնը Հայ Ազգին համար, քանի որ Դաւիթ Բէկի օրերէն առգին, այսինքն մօտաւորապէս 1725էն մինչև մեր օրերը, առաջին կանոնաւոր, միանուաղ, ուժեղ և յարձակողական կրօնիւր եղած է Խանասօրի լեռնագաշտին մէջ 1897ին կատարուածը:

Պ. Շահէն խօսեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան

Ճրագրին վրայ և փաստեց թէ ինչպէս իբր գիտական հիւքերու վրայ գրուած ևւ տեւական ըլլարու փափարոյ կուսակցութիւն, Հ. Յ. Գաշնակցութիւնը ընդգրկած էր Սոցիալիստ-Ֆէտէրալիստ ծրագիրը և իւր յայտը գրած աշխատաւոր-բանուոր և հողագործ գասակարգերու վրայ, անիկա կը ձգտի աղատագրել հայ ժողովուրդը և առհասարակ շահագործող զանգրւածները ժողովուրդին, թէ այդ գործունէութեան համար պէտք եկած գրամն ալ, արիւնն ալ սպասելով եւ ստանալով առ միեւնոյն ժողովուրդէն:

Բազմութիւնը, գոհ ուրախ և ոչ ապիպը-ւած դուրս ելաւ հանգէսէն (1) ՀՐԱՏՈՒ

## ՅԱՌԱՋԻԿԱՅ ԿԻՐԱԿԻ

18 ՕԳՈՍՏՈՒ 1907 ԺԱՍԸ ՅՈՒԿԷՍԻՆ ԵԿԵՂԵՅԻԻ

ՊԱՐՏԵՑԻՆ ՄԷՋ

ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՄԸ

ուր երկու Գաշնակցական յայտնի խօսողներ Պ.

(1) Ծ. Խ. Մեր առած մասնաւոր տեղեկութեան նայելով ասանկ գեղեցիկ հանգէս մը մեր բուրեւա գասակարգերուն կողմէ յարգըւած է բացարձակ բացակայութեամբ:

Պ. Ն. Հանգոյց և Նաչէն պիտի բացատրեն ժողովուրդին Հ. Յ. Գաշնակցութեան ծագրին քաղաքական ժառրջ նկատի ունենալով այս տեսակ հաւաքոյթներու և բանախօսութիւններու մեծ օգտակարութիւնը ժողովուրդին մտքին լուսաւորմանը համար կը յուսանք որ Այգիսանդիոյ Հայերը խառն պիտի գիտեն առաջագրուած ժողովին որուն մտարը ձրի է (1)

ՆՈՐ ՀՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ

AMERICAN STUDIO

(ԱՄԷՐԻՔԱՆ ՍԹՈՒՏԻ)



Յունաց Ս. Էփանկէլիզմ եկեղեցիին գէմ:  
Սոյն հոյ լուսանկարչատան մէջ, որուն վարիչն է Տ. Արամ Յովհաննէսեան, գոհացուցիչ գիներով և ամերիկեան ճաշակով ամենանուրբ լուսանկարներ կը պատրաստուին, որոնք կարող են գոհացնել ամենէ գթուաբան հաճոներն իսկ:  
Ամենակատարեալ ակրանտիստաններ կը պատրաստուին, նոյնիսկ հին լուսանկարներու վրայէն:

Կը յանձնարարենք մեր ազգայնոց այցելել սոյն նոր լուսանկարչատունը:

(1) Եւքն ալ արդեօք ձրի է:

Ծ. Խ.

## ՆՈՐ ՀՐԱՀԱՆԳ

Կէս-անպաշտօն անհրաժեշտ ազրիւրէ մը, որուն ծորակը արուած է, կիմանանք թէ եգիպտոսի վիճակին համար Վարչական յաւելուածային հըրահանգ մը հասած է Կ. Պոլսէն:

Այդ հրահանգին զլխաւոր կէտերը ահաւասիկ կը ներկայացնենք մեր ընթերցողներուն:

1.- Եգիպտոսի մէջ Սահմանադրական ընտրութիւնները կը կատարուին Աշնանամուտքին, եթէ այդ միջոցին ջերմաչափը շուքի մէջ 14 աստիճան ցոյց տայ, հակառակ պարագային ընտրութիւնները կը յետաձգուին Ձմեռնամուտքին:

2.- Ընտրողները իրենց քուէն տալէ առաջ պառտուար են պազ ջուրով լուացալի իրենց մտային վիճակը հանգարտեցնելու համար:

3.- Ընտրութեանց պահուն անհրաժեշտ է որ երկու փաշա և վեց պէյ գանուին եգիպտոսի մէջ:

4.- Քուլփայի, մաշայի, օրեայի, սպաթիի և պարսիկի պէյերը հաշուի չեն առնուիր:

5.- Ընտրելի ըլլալու համար անհրաժեշտ է եգիպտոսի մէջ ծնած և տեղացի ըլլալ:

6.- Աչքին մէկը կոյր և առտունները կէս օխա ֆուլ ուտողները իբրև տեղացի պիտի համարուին:

7.- Անոնք որ տեղացի, ամուսնացած, պե-

տական պաշտօնեայ և միանգամայն առևտրական տան տէր են իրաւունք ունին չորս քուէ տալու:

8.- Ամուսնացած և յետոյ կինը թողած անձերը կէս քուէ պիտի տան:

9.- Գաւառական ժողովները պիտի բազկանան տասնըհինգ անգամներէ, որոնց վերջինը տասնըվեցերորդ անգամ պիտի կոչուի տգեղ թիւրիմացութեանց անգի չտալու համար:

10.- Առաջնորդի հիւանդութեան ատեն մաքրողականի ղեղերու ծախքը Գահիրէի և Ալեքսանդրիոյ սնտուկները կէս առ կէս պիտի վճարեն:

11.- Փողովի օրեր ամէն երեսփոխան պարտաւոր է երկնրկու ցանավիչ միասին բերել սուրճը և շուրը առաջնորդարանէն կը մատակարարուի:

12.- Քուէ տալու իրաւունքէն **ՐԱՑԱՐՁԱ** **ԿԱՊԷՍ** զրկուած են այն տեղացի, ամուսնացեալ, պետական պաշտօն ունեցող կամ առևտրական տուն հիմնող ազգայինները որոնք չեն վճարած իրենց ստացած թերթերուն բաժնեղինը:

**ՅՈՒՍՈՂԱՏ ԾՆՈՂՔՆԵՐՈՒՆ.** Այն ծնողները որոնք իրենց զաւակներուն հաճելի և յարմար ժամանց մը չգտնելուն համար խորին յուսահատութեան մատնուած են, կրնան ապահով կերպով դիմել Տ. Լ. Թօքաթլեանի «Յոյս» անուն նոր խանութը Ռամլէի կայարանին դէմ:

Պէլ Վիւ սրճարանին ստորնայարկը, ուր պիտի գտնեն ամէն տեսակ նորահնար սիւրբօրիւններ, ընտանեկան կատակախաղեր, հիթիոններ, ևն. ևն. ինչպէս նաև ամէն տեսակ պատկերազարդ քառթբոսթալներ և ա գուղարդի վերաբերեալ անուշահոտութիւններ:

Սոյն խանութին մէջ վիճակահանութեան գրուած է գեղեցիկ կրամօֆօն մը առանը 3 զուշողջի:

### ԳՈՒՀՐԷԱԿՈՆ ԼՈՒԻՆԵՐ

Գալստեան վարժարանի տնօրէնը, ինչպէս յայտնի է, հրաժարած է, իր մասին եղած համակրական ցոյցերէն իր համեստութիւնը վիրաւորուած զգալով:

Կ'իմանանք թէ հոգաբարձութիւնը իր անդամներէն մեծագոյնը Ռաս-էլ Պար զրկած է նոր տնօրէն մը որսալու համար: Սակայն հակառակ իր ջանքերուն փնտոածը հոն գտած չրլլալով, մտերը դանուող Բաֆր էլ Պաթիզ գիւղը ուղղած է իր խուզարկութեանց հայելի և վերջապէս յաջողած է կէոր, ծանրալիչու ու խոչորկէկ ձմերուկ մը գտնել որ յանձն առած է տնօրէնի պաշտօնը խղճի մտօք կատարել այն պայմանաւ որ զինքը փորձելու համար գլուխը չկտրեն:

Հոգաբարձուն՝ աօքթ. Ն. Տաղաւարեան՝ այդ պայմանէն հետեցուցած ըլլալով թէ ձմերուկը գուցէ կարմիր կուսակցութեան կը պատկանի մերժած է անոր թեկնածութիւնը: Ձմերուկը որ ճշմարտապէս գեղին է եղեր, բարկութենէն կասկարմիր է կտրեր և այժմ ըստ պառնալիքի կար...կուտ կը տեղացնէ կոր հոգաբարձութեան զլիսին:

Ահաւասիկ տահաւոր քրիզ մը ևս Գանիրէի Հայոց համար:

---

Դողում մը իմանալով այս եղելութիւնը նամակաւ ինքզինք առաջարկած է իրրն տնօրէն:

Իսկ Ասիութեցի սեխ մը պապիրոսեայ պրօշիւրով մը կը պատրաստուի ձմերուկին խնդիրը հասարակաց դատաստանին առջև հանել:

Սեժ յուզում կը տիրէ վարունկներու շրջանակին մէջ:

---

Այս միջոցին հոգարարձութեան միւս անդամները, որոնք Գահիրէ կը գտնուին, ժողով գումարելով, որոշած են Պուլաքի նորակառոյց վարժարանին շուրջ երկը կանգուն լայնութեամբ իրամաստ մը փորել սաւ որպէսզի տնօրէնութեան թեկնածուները չիրնան վարժարանին մօտենալ:

Ասով ալ չբաւականանալով մտադիր են երկաթեայ պահպանիչ շղթայ մը անցնել դպրոցի մուտքին բոլորտիքը:

Քանի մը ճամպազ և օքքապազ տնօրէն, ունէր սակայն Ալեքսանդրիայէն ճամբայ ելած են այդ արգելքներուն հակառակ դպրոց մտնել փորձելու համար:

Սմբատ Բիւրատ Ռումանիայէն հեռագրտակով պիտի հետեի այս աճպարարական փորձերուն:

Հոգարարձու մը այս առթիւ սա խորիմաստ կանխագուշակութիւնը ըրած է.

- Կարձեմ, ի վերջոյ Քիւրքճեանին պէտք պիտի ունենանք:

---

Կը լսենք թէ «մենձ»անուն հրապարակագիր Ա. Արփիարեան «իրեք» շարաթէ ի վեր ճամբայ ելած է Սրբլանտիա Պարի առջևէն, «իրիկնամուտ»ին, դէպի Ալեքսանդրիա, ուր կը յուսայ հասնիլ Դեկտեմբեր 25ի «այգօր»ին, հոն անցնելու համար ամառնային եղանակը:

Ա. Արփիարեան իրրն ճամբու ընկեր իրեն հետ առած է Հայկ դիւցազնը և Կրեայ մը:

---

### ՀՆՏՐՈՂ ԵՆՔ ՄԵՆՔ

Ի Բիւր գաշտից բնութիան շքեղ  
Թէ վարդք բուսնին սկրողաբար,  
Մատուեր գարնան ամեմազեղ  
Թէ որ քաղեն փափուկ խլյար՝  
Զունիմ բառ մի այնքա՛ն սիրուն  
Քան զամծկալի Աշուն անուն:

Տար ինձ բու ձնուք, ընտրող ենք մենք  
Որ փաշայիւ էինք զատուած  
Նախկին ամէն ոխ չարանհնգ  
Ի մի քրւէ ցրուին ի բաց . . .  
Ընդ արմաւօք ի՛նչ կայ սիրուն  
Քան զամծկալի Աշուն անուն:

Երբ ալեւոր շայրքն Շնորհքիան  
Տեսնէ գորդիս իւր քովէ քով՝  
Սրտին խորունկ վէժքըն դաժան  
Քաղցքը քրտանց բուժին ցողով . . .  
Ընդ արմաւօք ի՛նչ կայ սիրուն  
Քան զամծկալի Աշուն անուն:

Մէկտեղ զագիծք մենք ի հընում  
Խէ՛ր դարձեալ անդ, յանդաստան  
Զրենք, ըզտամծս և ըզլըղում  
Որ թաղական ըլլայ մեր խան . . . .  
Ընդ արմաւօք ի՛նչ կայ սիրուն  
Քան զամծկալի Աշուն անուն:


Մէկտեղ մտաինք, մէկտեղ լըռենք,  
Մէկտեղ թխսենք մեր քրւէնք  
Չախորժակ մեր Աշման սլոհենք  
Որ ետ դառնան հայ հարուստներ . . . .  
Ընդ արմաւօք ի՛նչ կայ սիրուն  
Քան զամծկալի Աշուն անուն:

**ZINCOGRAPHIE**



**HENGER NAZARETHIAN**  
ALEXANDRIE RUE STAMBOUL

**HENGER NAZARETHIAN.**



RUE  
STAMBOUL

**ZINCOGRAPHIE**

“ԱՋԱՏ ԻՍՈՒՔ” և Գալստեանքը

— ԱՋԱՏ ԻՍՈՒՔ — ԿԵ ՀԱՍՏԱՐԱԿՈՒՄ ԵՍԲԱՐ ՕՏԵՐԸ  
Ազգայնորդ համար բաժնեգրից է

40 ՓԻՐԸ      40 ՂՐԸ    07.2  
20    ”      20    ”      ”

ԱՐՅՅՈՒՆՆԵՐ

ԵՒՐԱՍ    40    ՓԻՐ      10    ՏՐԱՐ  
ՈՒՌԱՒ    ..    ..      4    ՐՈՒՂԼԻ  
ԱՍԵՐԻՎԱ    ..    ..      2    ՏՈՒՐ

Բաժանորդագրութիւնը կտնկիկ

ՀԱՏԻ 0 ՂՐԸ 07.2

“ԱՋԱՏ ԻՍՈՒՔ” և համար բաժնեգրին կամ  
որ և է դրամիւն պետք է ուղիւ հե-  
տեւեայ հասցիին

**H. Nazarethian**

Rue Stamboul

ALEXANDRIE, E EGYPTE

Մանուցումներ կրկնամսական մասնաւոր  
պայմաններով:

Գրանցումները կը գործի Ե. ՕՏԵՐԸ

Տպագր. Փարզ 4 ԿԱԶՄԻՔԵԱՆ ԱԼԵՔԱՆԴՐԻԱ

